26.261

15 JAN 2018

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՍՍՀ-СОРА

3346
Կ-21

ԼԵՆՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ ՊԱՏ. 307 ՏԻՐ. 900 ՕՐ. ՔԱՂ, 6429
1937 ԹԻՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0193288
17 MAY 2013
26.261

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Տնայնագործների և արհեստավորների փոխ. ապահովագրության մասին ԽՍՀՄ—ԿԳԿ և ԺԿԽ-ի 1929 թվի հունիսի 26-ի վորոշման լրացման վերաբերյալ։

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1932 թվի ապրիլի 7-ի վորոշումը։

2. Արհեստավորական կոոպերատիվ ընկերությունների անդամների աշխատանքի պայմանների և կենցաղի բարելավման ու առողջապահական նպատակով, հանձնարարել Արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխ. օգնության գանձարկղին, փոխադարձ ապահովագրական և փոխ. օգնության կարգով բոլոր արհեստավորական կոոպերացիայի կոոպերացված անձնավորությունների և նրանց ընտանիքի սպասարկումը. (Թոշակներով, նպաստներով, բուժ և ախտահանիչ օգնության ապահովումը և այլն). (Որ. ժող. ԽՍՀՄ-ի 1932 թվի, № 36, հոդ. 160)։

Վորոշում Թաղման նպաստների վերաբերյալ Արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխ. օգնության խորհրդի Նախագահության հաստատման մասին։

1932 թվի հունիսի 9-ին։

1. Հաստատել նպաստների վերաբերյալ սույնին կցված հրահանգը։



Կ-21

2. Տարածել սույն կանոնադրության ներգործումը ԽՍՀՄ-ի արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխադարձ օգնության դրամարկղի ամբողջ սիստեմում։

3. Թաղման նպաստների վերաբերյալ կանոնադրությունը մտցնել գործողության մեջ 1937 թվի օգոստոսի 1-ից, տարածելով այդ նույնպես և այդ ժամկետում նպաստների վճարման դեպքում, վորոնք 1937 թվի օգոստոսի 1-ին չեն վճարված յեղել։

4. Գործածության մեջ մտցնելով Թաղման նպաստների վերաբերյալ կանոնադրությունը, վերացնել դրամական ձևով սպասարկման կանոնադրության այն մասը, վորը Թաղման նպաստների ապահովման վերաբերյալ հաստատված է Համարդկոոպգանձխորհրդի Նախագահությունում 1933 թվի ապրիլի 19-ին։

Համարդկոոպգանձխորհրդի նախագահության
նախագահ՝ Ա. ԺԱՐՈՎ

Նախագահության քարտուղար՝ Ա. ՄԱԼԱԽՈՎԱ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. ՄԻ ՇԱՐՔ ԱՆՁԱՆՑ, ՎՈՐՈՆՑ ԹԱՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ Է ՏՐՎՈՒՄ

1. Թաղման համար նպաստ են տալիս մահվան դեպքում.—

ա) Արհեստավորական կոոպերացիայի արտելների անդամներին, պրոմկոլխոզի անդամներին, վորոնք ապահովվում են միմիայն իրենց աշխատանքներով արհեստագործարանում։ Փոխադարձ ապահովագրությունից թոշակ ըստացող հաշմանդամներին, բուժ. հիմնարկների, բանֆակների, խոր. արհեստակցական դպրոցների և վորակի բարձրացման, վորակի փոխման, կադրերի պատրաստման կուրսերում բոլոր սովորողներին, յեթե նրանք մինչև ուսումնական ձեռնարկությունում ընդունվելը աշխատել են վորպես արտելի անդամի։

2. Թաղման նպաստը տրվում է նույնպես հոդ. 1-ին-ում նշված անձնավորությունների անդամի ընտանիքի հետևյալ անդամների մահվան դեպքում, յեթե ընտանիքի այդ անդամները գտնվել են նրանց խնամքի տակ։

ա) Կնոջը, բ) 18 տարեկանի չհասած կամ անաշխատունակ (անկախ տարիքից) տղաներին, աղջիկներին, յեղ-



բայրներին և քույրերին, վորդեգրածներին (վորդեգրության կարգով), խորթ տղաներին և աղջիկներին։

գ) Ծնողներին և վորթեգրողներին։

դ) Պապերին և տատերին։ Այս դեպքում խնամքի տակ չեն համարվում նրանք, վորոնք ունեն գոյության ինքնուրույն աղբյուրներ (ստանում է աշխատավարձ, թոշակ, գյուղական տնտեսության կազմի մեջ է մտնում և այլն)։

3) Արտելի անդամի կամ նրա ընտանիքի անդամների մահվան դեպքում, վորոնք նշանակված են ԲԳԿԲ-ի հաստիքում, նպաստ տրվում է, յեթե վերջին աշխատավարձի վճարման օրվանից մեկ ամսվա ընթացքում մահը տեղի յե ունեցել։ Սովորողների համար (նախկին արտելի անդամներին) այդ ժամկետը հաշվվում է վերջին թոշակի ստացած օրվանից։

Յերկրային մասերում փոփոխիկ կազմի 3—5 ամսվա վարժեցման կամ հավաքի կանչված զինակոչիկի կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում, նպաստ տրվում է յեթե մահը տեղի յե ունեցել վարժեցման կամ հավաքի ժամանակաընթացքում։

4. Կալանքի տակ գտնված արտելի անդամի կամ նրա ընտանիքի անդամի մահվան համար նպաստ տրվում է, յեթե մահը տեղի յե ունեցել մինչև արտելից աշխատանքի հաշիվների վերացնելը։

5. Արտելում պարտադիր աշխատանքում գտնվող արտելի անդամի կամ նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում, նպաստը տրվում է ընդհանուր հիմունքներով։

6. Մինչև 7 ամսական հղիության ընթացքում վիժվածի թաղման համար նպաստ չի տրվում։

### 2. ԻՆՉ ՉԱՓՈՎ Է ՆՊԱՍՏ ՏՐՎՈՒՄ

7. Նպաստը տրվում է հետևյալ չափերով.

ա) Յեթե թաղումը տեղի յե ունենում քաղաքում,

բանվորական քաղաքամասում, նոր կառուցված վայրերում կամ բանվորական ավաններում, թաղման համար 10 տարեկանից բարձր տարիք ունեցող անձանց՝ 40 ռուբլի, իսկ մինչև 10 տարեկաններին՝ 20 ռուբլի։

բ) Յեթե թաղումը տեղի յե ունենում գյուղական վայրերում, թաղման համար 10 տարեկանից բարձր տարիք ունեցողներին՝ 20 ռուբլի, իսկ մինչև 10 տարեկաններին՝ 10 ռուբլի։

## 3. ՅԵՐԲ Ե ՆՊԱՍՏԸ ՏՐՎՈՒՄ

8. Նպաստը տրվում ե մինչև թաղումը, յեթե նպաստ չի ստացված մինչև թաղումը, ապա նրա համար կարելի յե պահանջ դնել մահվան որվանից մինչև վոչ ուշ վեց ամսվա ընթացքում։ Վեց ամսվա ժամկետը բաց թողնելու դեպքում, նպաստը կարող ե տրվել միայն բացառիկ դեպքերում—ըստ Արտապահովագրական գանձարկղի հրահանգի։

## 4. ՆՊԱՍՏՆ ՈՒՄ Ե ՏՐՎՈՒՄ

9. Արտելի անդամի թաղման նպաստը տալիս են նրա ընտանիքի անդամին կամ այն անձնավորությանը, վորը կազմակերպում ե թաղումը։

Թաղման նպաստը չի տրվում կազմակերպություններին կամ հիմնարկներին, վորոնց անմիջական պարտքն ե թաղումը կատարել իր հաշվին (հիվանդանոցներ, հաշմանդամների հիմնարկներ և այլն), ինչպես և այն հիմնարկներին, վորոնք իրենց նախաձեռնությամբ կազմակերպում են թաղումը։

10. Արտելի անդամի ընտանիքի անդամի թաղման նպաստը տրվում ե իրեն արտելի անդամին։

## 5. ՈՒՄ ԿՈՂՄԻՑ Ե ՏՐՎՈՒՄ ՅԵՎ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ Ե ՆՇԱՆԱԿՎՈՒՄ ՆՊԱՍՏԸ

11 Արտելի անդամի կամ նրա ընտանիքի անդամի



թաղման նպաստը նշանակվում ե Արտ. ապահովագրական գանձարկղը։ Ըստ Արտ. ապ. գանձարկղի վորոշման, նրա բոլոր ֆունկցիաները, նպաստի ապահովման բնագավառում, կարող են հանձնվել աշխատանքի պաշտպանության և կենցաղի բարելավման բյուրոյին (ԱՊԿԲԲ-ին), իսկ վոր տեղ ԱՊԿԲԲ-ներ չկան, ապահովագրական լիազորին հետեվողական հսկողությունը ե սահմանում Արտ. ապահովագրական գանձարկղը։ Նպաստների վճարումը կատարվում ե արտելի վարչության կողմից։

Նպաստները վճարվում ե ի հաշիվ արտելներից ըստացվելիք ապահովագրական մուծումների։

Նպաստների վճարումների և հաշվումների բոլոր աշխատանքները կատարվում են արտելի կողմից առանձին արտ. ապահովագրական գանձարկղի կողմից վորևեցե վճարումների։

Արտադրական ապահովագրական գանձարկղի թոշակառուների և նախկին արտելի անդամ սովորողների, նույնպես և նրանց ընտանիքների անդամների թաղման նպաստը նշանակվում ե և վճարվում ե Արտապահովագրական գանձարկղի կողմից։

12. Արտապահովագրական գանձարկղը չի ընդունում արտելների կողմից, նպաստի վճարման 15 որից ուշ ներկայացրված ի հաշիվ ապահովագրական մուծումների, վճարված թաղման նպաստների մարված փաստաթղթերը։ Այս դեպքում թաղման նպաստը մնում ե վճարված ի հաշիվ արտելի ծախսերի։

## 6. ԻՆՉՊԻՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԵՏՔ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

13. Արտելի անդամի մահվան նպաստն ստանալու համար (հոդ. 1) պետք ե ներկայացնել մահվան վերաբերյալ Զագսից տեղեկանք։

14. Արտելի անդամը յուր ընտանիքի անդամի թաղման նպաստն ստանալու համար պետք ե ներկայացնի ա) մահվան վերաբերյալ Զագսից տեղեկանք. բ) բարեկամա-

129

*կուն կապի և նրա խնամքին գտնվելու իսկության վերաբերյալ տեղեկանք (տնային լիազորից կամ գյուղխորհրդից) և այլն։*

## 7. ՎՈՐՏԵՂ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

*15. Մահվան նպաստների մերժման կամ նրա չափի մասին։*

*Արհեստավորական կոոպերացիայի ապահովագրական գանձարկղի կողմից թոշակների և նպաստների մերժումների վերաբերյալ դատի տալու վեճերի մասին։*

*ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1930 թ. դեկտեմբերի 16-ի մեկնաբանումը։ Ընդունել, որ ոչ ճիշտ սահմանման վերաբերյալ բողոքները ներկայացվում է փոխ ապահովագրական գանձարկղի սիստեմի հետեվյալ վերադաս մարմիններին։*

*Արտելների վարչությունների կողմից նպաստի ոչ ճիշտ վճարման կամ ուշացման վերաբերյալ բողոքները ներկայացվում է արտ. ապ. գանձարկղին։*

## 8. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ, ՎՈՉ ԿՈՈՊԵՐԱՑՎԱԾ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*16. Արտ. ապ. գանձարկղում անհատապես ապահովագրած ոչ կոոպերացված տնայնագործներին, թաղման նպաստների վճարման ենթակա են ընդհանուր հիմունքներով. եթե ապահովագրական դեպքի հասնելու ժամանակ նրանք համարվել են պարտաճանաչ վճարողներ։ (Չեն ունեցել մուծումների պարտքեր)։*

*Գանձարկղի կողմից թոշակառուների և նպաստների նշանակումների մերժման վերաբերյալ բողոքները լուծվում են ինստանցիոնի կարգով և դատարանի վերանայման ենթակա չեն («Դատական պրակտիկա» 1931 թ. № 2)*

Համարդկոոպգանձխորհրդի նախագահության
նախագահ՝ Ս. ԺԱՐՈՎ.

Նախագահության քարտուղար Ս. ՄԱԼԱԽՈՎԱ